ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT DEPARTMENT
OF MINISRTY OF DEFENCE OF THE REPUBLIC
OF ARMENIA
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email :depart@mil.am
Հեռ. (+37410) 29-45-45
Ֆաքս. (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багревайд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел. (+37410) 29-45-45
Fax.Факс. (+37410) 29-46-13

№ ՊԴ/21/424 Ա
"24" 11 2017թ.

«Մակսիմ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա. Գասպարյանին
ք. Երևան, Բաբաջանյան 1, բն 15
էլ. հասցեն՝ a.gasparyan.info@gmail.com
ՀՎՀՀ՝ 01260794

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մակսիմ» ՍՊԸ-ի միջև 15.03.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-3/1-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. ընթացքում մատակարարել ծաղկային կոմպոզիցաներ (Ծաղկեպսակ մեծ):

Համաձայն պատասխանատու ստորաբաժանման համապատասխան գրության, 2017թ. 4-րդ եռամսյակում, մասնավորապես՝ 20.10.2017թ. և 21.10.2017թ. ծանուցվել եք վերը նշված ապրանքների մատակարարման վերաբերյալ, սակայն մատակարարում չեք իրականացրել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հոկտեմբերի 25-ին՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ 33 հատ ծաղկային կոմպոզիցաների (Ծաղկեպսակ մեծ) մասով:

Տեղեկացնում եմ, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 43 (քառասուներեք) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Մակսիմ» ՍՊԸ-ից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը):

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ